ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վեհափառ Հայրապետը հուլիսի 1-ին ուղևորվեց Մոսկվա՝ Ռուսաց պրավոսլավ Եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյակի հոբելյանական տոնակատարություններին մասնակցելու համար։

Վեհափառ Հայրապետին ուղեկցող շքախմբի կազմի մեջ մտնում էին— Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոսը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ստեփան Կամսարականը և Գերագույն Հոգևոր Խորհրդի ու Վեհի անձնական քարտուղար Հովհաննես Ագուլյանը։

***

Նորին Վեհափառությունը օգոստոսի 5-ին շքախմբի ուղեկցությամբ բարեհաջող կերպով Մոսկվայից ժամանեց Մայր Աթոռ։

***

Օգոստոսի 6-ին Մայր Աթոռ այցելեց լատվիացի պիոներների մի մեծ խումբ։ Պիոներները մեծ հետաքրքրությամբ Տաճարը ու նրան կից Թանգարանը դիտելուց և իրենց հուշատետրերում գրանցումներ անելուց հետո վերադարձան Երևան։ Թե Տաճարում և թե Թանգարանում պիոներներին բացատրություններ էր տալիս թանգարանապետ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։

***

Օգոստոսի 15-ին, Վերափոխման տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց։

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Պատարագում էր Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որը և հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Տաճարը լիքն էր երկսեռ բազմությամբ։

***

Սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնին, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Պատարագում էր Գերապատիվ Տ. Սուրեն Եպիսկոպոսը։

Հավուր պատշաճի քարոզ խոսեց Գերապատիվ Տ. Կարապետ Եպիսկոպոսը։

Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ և հոծ բազմության ներկայությամբ երեկոյան Մայր Տաճարի շուրջը կատարվեց Խաչվերացի թափորը։

***

Սեպտեմբերի 25-ին, Ս. Գևորգա տոնի և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի օրը, Վեհարանում ընդունելություն-հյուրասիրություն տեղի ունեցավ։ Հյուրերը իրենց բաժակաճառերով առողջություն ու արևշատություն մաղթեցին ծերունազարդ կորովի Վեհափառ Հայրապետին և մեծ գոհունակությամբ ունկնդրեցին Վեհափառ Հայրապետի խրատական ու իմաստալից խոսքերը։

***

Սեպտեմբերի 29-ին Երևանից Մայր Աթոռ ժամանեցին ֆիզիոլոգների, բիոքիմիկոսների և ֆարմակոլոգների անդրկովկասյան համագումարի (Երևանում) մի խումբ մասնակիցներ, որոնց թվում Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի մի շարք ականավոր գիտնականներ։

Եղբայրական երեք ռեսպուբլիկաների գիտնականները մանրամասն դիտեցին Տաճարն ու նրան կից Թանգարանը։ Այցելուներին ռուսերեն լեզվով բացատրություններ էր տալիս լուսարարապետ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։

Այցելուները ցանկություն հայտնեցին տեսնվելու Վեհափառ Հայրապետի հետ։ Վեհի համաձայնությունն ստանալուց հետո այցելուները Տ. Սահակ ծայրագույն վարդապետի առաջնորդությամբ Վեհարանում ներկայացան Վեհափառ Հայրապետին։ Այնուհետև Ծաղկյա դահլիճն ու Վեհարանը դիտելուց հետո նրանք հրաժեշտ առան Վեհափառ Հայրապետից ու մեկնեցին Երևան։